«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

8 Սեպտեմբերի 2023, N 2 - 4

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Գրիշա Վյաչեսլավի Շաբուրյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին

Լսելով և քննարկելով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2021 թվականի օգոստոսի 23-ի N ՈՒՄ /100/ 18-Ա հրամանով հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու (22.07.2021) կապակցությամբ 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով 2022 թվականի դեկտեմբերի 16-ին վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (18.08.2023) դիմած ուսանող **Գրիշա Վյաչեսլավի Շաբուրյանի** ուսանողական իրավունքները 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը ընդհատած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով մարտական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ **Գրիշա Վյաչեսլավի Շաբուրյանը** սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է առողջական խնդիրներ (2022 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետևանքով ստացել է հրազենային, բեկորային վիրավորում)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. **Գրիշա Վյաչեսլավի Շաբուրյանի ուսանողական իրավունքները վերականգնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 2-րդ կուրսում 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից**:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. սեպտեմբերի 8
Երևան